



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻՂՐՈՐԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հիդրոերկրաբանական տեղեկատվություն
(ստորերկրյա ջրային ռեսուրսներից ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար)

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մանանդյան փողոցում Երևանի քաղաքապետարանի կողմից ոռոգման նպատակով նախատեսվող 1 (մեկ) հորատանցքի հորատման վերաբերյալ

Հորատանցքը նախատեսվում է հորատել Երևան քաղաքի Մանանդյան - Նիզամի փողոցների խաչմերուկում, N46 դպրոցի հարակից տարածքի հետևյալ կոորդինատներում՝

$X=40^{\circ} 09' 15.7''$

$Y=44^{\circ} 29' 15.8''$

$H = 931$ մ

(Նշված կոորդինատները ըստ տարբեր GPS-ների կարող են տատանվել ± 20 մ սահմաններում)

Տարածքում օդի բազմամյա միջին տարեկան ջերմաստիճանը 11.7°C է, բազմամյա միջին տարեկան տեղումների քանակը՝ 302 մմ, գոլորշիացումը՝ 420 մմ:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական - ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները, որոնք ներկայացված են փուխր բեկորային և կավային նստվածքներով:

Նախագծվող հորատանցքին բնորոշ է հետևյալ երկրաբանական - հիդրոերկրաբանական կտրվածքը.

0.00 – 11.0 կավավազ , ավազակավ խճի և մանրախճի պարունակությամբ ($Q_{3.4}$)

11.0 – 65.0 գետաքար-գլաքար, խիճ, մանրախիճ 30.0մ խորությունից ջրատար (Q_3)

65.0 – 90.0 կավ, ջրամերժ (N_2)

Ջրերը հորատանցքում կվերականգնվեն շուրջ 30.0մ խորությունում:

Հորատանցքը կարելի է հորատել 394մմ տրամագծով և ամրակապել 324մմ տրամագծի խողովակներով: Ամրակապող խողովակների սյան 30.0 – 60.0մ խորության միջակայքում պետք է տեղադրվի ծակոտկեն գտիչ:

Համաձայն տարածքում հորատված հորատանցքերի տվյալների, նախագծվող հորատանցքի տեսակարար ծախսը սպասվում է 1.5լ/վ.մ:

Հորատանցքի 60.0մ խորությունում կարելի է տեղադրել ՅԼԲ-8-40-70 մակնիշի խորքային պոմպ՝ 11.1լ/վ արտադրական հզորությամբ:

Ջրերի ջերմաստիճանը սպասվում է 15.0°C: Ըստ քիմիական կազմի տեղամասում տարածված են հիդրոկարբոնատային կազմի ջրերը, որոնց ընդհանուր հանքայնացումը մինչև 1.3գ/լ է, ընդհանուր կոշտությունը՝ 10.8մգ.համ/լ, ջրածնային ցուցիչը (pH)՝ – 7.6:

Նախատեսվող հորատանցքի համար նշված երկրաբանական-հիդրոերկրաբանական կտրվածքը, հիդրոերկրաբանական պարամետրերը, ջրերի ջերմաստիճանը և ջրատար հորիզոնների տեղադրման միջակայքերը նախագծային կամ սխեմատիկ են: Դրանք պետք է ճշտվեն հորատման ընթացքում ամրակապման ժամանակ ծակոտկեն զտիչի ճիշտ տեղադրման համար, իսկ փորձնական ֆիլտրացիոն աշխատանքների հիման վրա պետք է ընտրվի խորքային պոմպի տիպը և տեղադրման խորությունը:

Պատվիրատուն պարտավորվում է հորատման աշխատանքների ավարտից հետո փաստացի տվյալներով (կազմված և հաստատված հորատող կազմակերպության կողմից) ներկայանալ «Հիդրոոգերոլոգիականության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ՝ հորատանցքի անձնագիրը կազմելու և ստանալու համար:

Համաձայն Ջրային օրենսգրքի 19.1 հոդվածի հիդրոերկրաբանական մշտադիտարկումների վարումը պարտադիր է, որի համար հորատանցքում լրացուցիչ պետք է տեղադրվի 50մմ տրամագծի խողովակ՝ շուրջ 60.0մ երկարությամբ:

Կազմեց՝ հիդրոերկրաբ. հետազոտ. բաժնի պետ

Ա. Հակոբյան

Ստուգեց՝ գլխավոր հիդրոերկրաբան

Հ. Աղինյան

ՏՆՕՐԵՆ

Լ. ԱԶԻԶՅԱՆ

06.07.2023թ.



